

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԷՔՁԻՍՏԵՆՑԻԱԼՈՒԹՅԱՆ
ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ն.Ա. Զեյնալյան, << Կեդրական կառավարման ակադեմիա

Հոգեբանական գիտության մեջ արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնների վերաբերյալ պատկերացումների բազմաբնույթ են: Մենք հիմք ենք ընդունում անձի արժեհամակարգի վերաբերյալ էքզիստենցիալ հոգեբանության դրույթները (Վ. Ֆրանկ, Ա. Լենգլե), համաձայն որի՝ արժեքը մեկնաբանվում է որպես իմաստ [1]:



Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել էքզիստենցիալության և արժեհամակարգի փոխադասման ավորվածությունը հոգեբանական պատերազմի պայմաններում: Հետազոտության իրականացման նպատակով կիրառել ենք Ա. Լենգլեի ու Վ. Օրգլերի «Կյանքի իմաստավորվածության ակտորոշման մեթոդիկան» (էքզիստենցիալի սանդղակ) [2]: Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտելու անձի էքզիստենցիալ հագեցվածության սուբյեկտիվ ընկալումը: Թեստի մշակման համար հիմք է հանդիսացել Վ. Ֆրանկի իմաստի տեսությունը [4]: «էքզիստենցիալ հագեցվածություն» հասկացությունը կիրառում է Վ. Ֆրանկը՝ անձի կյանքի որակը նկարագրելու համար: էքզիստենցիալ հագեցվածության աստիճանը ցույց է տալիս, թե արդյո՞ք անձի կյանքը իմաստավորված է, որքա՞ն հաճախ է նա ապրում ներքին համաձայնեցվածությամբ, արդյո՞ք համապատասխանում են իր որոշումները և արարքներն իր էությանը, ո՞նա՞կ է, արդյո՞ք, դրական ներդրում ունենալ կյանքում: Խոսքը ոչ թե այն մասին է, թե ինչպես է անձն ապրում, այլ թե ինչպիսին է իր կյանքի սեփական ընկալումը: Թեստն արտացոլում է մարդու կողմից սեփական կյանքի սուբյեկտիվ գնահատականը՝ «անհատականություն» և «էքզիստենցիալություն» սանդղակների, ինչպես նաև չորս ենթասանդղակների՝ «ինքնավերացարկման», «ինքնատրանսցենդենտություն», «ազատության» և «պատասխանատվության» միջոցով [2]:

Հետազոտության արդյունքում վերոնշյալ գործոնների դրսևորման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում: Մեր կատարած հետազոտության ընտրանքը կազմել են 18-25 տարեկան 200 երիտասարդ: Հետազոտությունը կազմակերպվել է երևանի և Ստեփանակերտի բնակիչների շրջանում: Իրականացրել ենք ընտրանքի նորմալ բաշխվածության ստուգում՝ ըստ Կոլմոգորով-Սմիրնովի չափանիշի. որի համաձայն՝ հետազոտական երկու խմբերում առկա են նորմալ բաշխվածության ցուցանիշներ: Ստանդարտ շեղումների ցուցանիշները նույնպես նորմալի սահմաններում են, ինչը հավաստում է, որ հետազոտական խումբը միատարր է:

Աղյուսակ 1. Լենգլեի էքզիստենցիալության սանդղակի համեմատական փոփոխությունները հետազոտական երկու խմբերում

Սանդղակը	Երևան		Ստեփանակերտ		Սույույնների է չափանիշի նշանակությունը
	Միջին	Ստանդարտ շեղում	Միջին	Ստանդարտ շեղում	
Ինքնավերացարկում	28,99	6,80	28,6	7,06	0,398
Ինքնատրանսցենդենտություն	69,87	7,92	70,93	7,57	0,967
Ազատություն	45,11	7,97	46,3	8,01	0,990
Պատասխանատվություն	51,81	9,36	53,22	10,67	0,993

Անհատականություն	98,86	12,29	99,53	12,43	0,383
Էքզիստենցիալություն	96,92	15,23	99,52	18,43	1,088
Ընդհանուր ցուցանիշ	195,78	25,31	199,05	28,73	0,854

Լենգլի կյանքի իմաստավորվածության այստորոշման թեստի թուր գործոնների կրիտիկական նշանակությունները ցածր են Ասյուդենտի և չափանիշի նշանակություններից: Ընդ որում, հետազոտական երկու խմբերում ցուցանիշներն ունեն միջին դրսևորում:



«Ինքնավերացարկում» ենթասանդղակը (միջին ցուցանիշները Երևանի և Ստեփանակերտի հետազոտական խմբերում համապատասխանաբար՝ M-28, 99, M-28, 6) չափում է ներքին ազատ տարածություն ձևավորելու ընդունակությունը: Հետազոտական երկու խմբերում էլ ունենք ինքնավերացարկման միջին ցուցանիշ, որի դեպքում բարելավվում են իրավիճակի ընկալման ընդունակությունը և պարզությունը: Այս սանդղակի միջին ցուցանիշը նշանակում է, որ երիտասարդները, սովորաբար, չեն կենտրոնանում բացառապես իրենց վրա, անմիջապես չեն սրճագանքում պատահական ազդակներին, այլ փորձում են ընկալել իրավիճակը, մտածել դրա մասին և սթափ դառնել իրողությունների մասին: Ուշադրությունը մշտապես փոխադրվում է դուրս: Սեփական անձից դիտարկելու սահմանելու ընդունակությունը մեծանում է, սակայն սեփական պահանջմունքները դիտարկելու ընդունակությունը պահպանվում է: Ինքնավերացարկումը չափում է ոչ թե խնդիրների առկայությունը կամ բացակայությունը, ոչ թե ցանկություններից, պատկերացումներից և նպատակներից, զգացմունքներից և վսիտներից ազատ լինելը, այլ այդ ամենի նկատմամբ հեռավորություն սահմանելու, աֆեկտներից, նախապաշարմունքներից և ցանկություններից ներքին ազատության հասնելու ընդունակությունը: Արտակարգ իրավիճակներում այս ընդունակության կայունությունը նույնպես կարևոր չափանիշ է:

Լենգլեն նշում է, որ անձնային ոչ բավարար հասունության դեպքում ինքնավերացարկման ընդունակությունը կարող է նվազել, դրա պատճառը, որպես կանոն, ներքին ցնցումներն են (կոնֆլիկտներ, հետտրավմատիկ վիճակներ) կամ ներքին ֆիզսացիան ինչ որ բանի վրա (պահանջմունքների անբավարարվածության, քրոնիկ դեֆիցիտի դեպքում): Այս սանդղակի ցածր ցուցանիշի դեպքում անձը զբաղվում է ինքն իրենով, օրինակ՝ կաշուն ցանկություններ կամ մտքեր, ակտուատացված մտածողություն, ֆիզսված զգացմունքներ, մեղադրանքներ ինքն իր հասցեին և այլն, բայց այսպիսի ցուցանիշներ դրսևորվում են նաև ծայրահեղ իրավիճակային ծանրաբեռնվածությունների դեպքում, երբ անձն ունենում է նախապաշարմունքներ և ընկալման սահմանափակություն: Ինքնավերացարկման անհնարինության դեպքում կարող է ի հայտ գալ կողմնորոշման կորուստ [2]: Այս փաստն անհրաժեշտ է հաշվի առնել երիտասարդների զարգացման ծրագրերում անձնային հասունության ձևավորմանը նպաստող բաղադրիչներ ներառելիս:

Ինքնատրանսցենդենտության ցուցանիշը հետազոտական երկու խմբերում միջին դրսևորում ունի (Երևան՝ M-69, 87, Ստեփանակերտ՝ M-70, 93), ինչը նշանակում է, որ առկա են բավարար ռուզական հագեցվածություն և արժեքները զգալու ու դրանցով առաջնորդվելու ներքին ընդունակություն: Սակայն ապրումների բովանդակության կարևորության ու արժեքի զգացումը սահմանափակ է: Առաջացող զգացմունքները կարող են ապրվել որպես խանգարող և մոլորության մեջ զգել անձին: Զգացմունքների ազդեցիկությունն ու լայնությամբ հարթ են, հուզականությունը՝ դժվար հասանելի:

Ինքնավերացարկումը նախապայման է ինքնատրանսցենդենտության համար, որը նկարագրում է Ֆրանկլի «մտնել աշխարհ, սեփական անձը բացահայտելու համար» դիտարկումը [5]: Այնպես որ, եթե ինքնավերացարկումը նշանակում է վերացարկվել սեփական անձից, որպեսզի

կարողանալ տրվել ինչ-որ բանի, ապա ինքնատրանսցենդենտությունը մարդուն վերադարձնում է ինքն իրեն՝ ներքին վիճակներն ապրելու հետ կապված աշխարհի արժեքները զգալու միջոցով:

«Ազատություն» ենթասանդղակը չափում է վճռականությունը: Հետազոտական տվյալների մշակման արդյունքում այս գործոնի դեպքում նույնպես արձանագրել ենք միջին ցուցանիշներ (Երևան՝ M-45, 11, Ստեփանակերտ՝ M-46, 3): Այս ցուցանիշները վկայում են անձի՝ որոշում կայացնելու ունակության, գործողությունների և որոշումներ կայացնելու հնարավորություններ գտնելու մասին: Թեպետ կայացրած որոշումներում վստահությունը կարող է իրավիճակային բնույթ ունենալ, սակայն աճում է դատողությունների ձևավորման և որոշումներ գտնելու հստակությունն ու ամրությունը: Անձին կարող է բնորոշ լինել սահմանափակումների հանդեպ հանդուրժողականությունը, ինչպես նաև կախվածությունը կարևոր միջանձնային հարաբերություններից:

Կարող ենք ենթադրել, որ վճռականության մեծացումը կարող է հանգեցնել արժեքների համապատասխան հիերարխիա կառուցելու ընդունակության, ինչն էլ իր հերթին կնպաստի անձնապես հիմնավորված որոշումների կայացմանը: Լենգլեն կարևորում է, որ առկա հնարավորությունների ֆունկցիոնալ անձը տեսնի իր համար անենակարևորը, ինչի հիման վրա կարող է դատել, ազատ ընտրություն կատարել և որոշել: Այս ընդունակությունն մոտ առաջացնում է անձի ազատության զգացողություն [3]:

«Պատասխանատվություն» ենթասանդղակը չափում է քայլեր ձևնարկելու պարտավորվածությունը: Պատասխանատվության հետ կապված չափվում է անձնային արժեքների վրա հիմնված որոշումներն ավարտին հասցնելու ընդունակությունը [2]: Այս գործոնի ցուցանիշները նույնպես միջին արտահայտվածություն ունեն (Երևան՝ M-51, 81, Ստեփանակերտ՝ M-53, 22), ինչը նշանակում է, որ առկա է ներգրավվածություն սեփական կյանքում, անձը կարողանում է պլանավորել իր գործողությունները՝ իր կյանքի հանդիսատեսի դերում լինելու փոխարեն: Անձին բնորոշ է պարտքի ու պատասխանատվության զգացումը, նա կարողանում է հետևել իր պարտավորություններին: Մարդը գործում է իր կամ ուրիշների հանդեպ պարտավորվածության զիտակցվածությամբ: Անփական որոշումները կյանքի կոչելու գործընթացը դանդաղեցնելը պայմանավորված է վստահությամբ, որ ամեն ինչ ճիշտ է ընթանում: Սեփական վստահության բացակայության դեպքում փոխյալանող գործառույթը ստանձնում է պարտքի զգացումը:

Ինքնավերացարկման և ինքնատրանսցենդենտության ցուցանիշների արդյունքում ձևավորվում է «անհատականություն» ցուցանիշը, որը նկարագրում է, թե անձը որքան հստակ է ընկալում աշխարհը և ինքն իրեն: Հետազոտական տվյալների մշակման արդյունքով ստացել ենք այս ցուցանիշի միջին դրսևորում (Երևան՝ M-98, 86, Ստեփանակերտ՝ M-99, 53), ինչը բնորոշում է սեփական անձի ընդունմանը զուգընթաց աշխարհի հանդեպ բաց լինելը. անձի կոգնիտիվ և հուզական հասանելիությունն իր և աշխարհի համար: Միևնույն ժամանակ, անձի հուզական կայունությունը պայմանավորում է նրան խոցելի լինելուց: Կարող է բնորոշ լինել հարաբերությունների աղքատությունը, ինչը հնարավոր է, որ պայմանավորված լինի ընտրանքի երիտասարդ տարիքով:

«Էքզիստենցիալություն» սանդղակը չափում է վճռականորեն և պատասխանատու կերպով կյանք մտնելու, ներգրավվելու ընդունակությունը: Այս ցուցանիշը ձևավորվում է ազատություն և պատասխանատվություն ցուցանիշների համադրությունից և բնութագրում է անձի էքզիստենցիալ այնպիսի կարևոր բնութագիր, ինչպիսին կյանքում կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու և դրանք պատասխանատվությամբ կյանքի կոչելու ընդունակությունն է, այդպիսով՝ կյանքն ավելի լավը դարձնելով: Եթե անհատականության ցուցանիշն արտացոլում է ինքն իր հետ գործ ունենալու մարդու ընդունակությունը («ներքին աշխարհ»), ապա էքզիստենցիալության ցուցանիշը վկա-

յում է արտաքին աշխարհի հետ կառուցողական հարաբերություններ ունենալու ընդունակության մասին: Այս սանդղակը գործողություններին մասնակցելու և դրանց հաջորդականության հանդեպ պատրաստակամությունն է:

Էքզիստենցիալության ցուցանիշի տվյալները միջին դրսևորվածություն ունեն (Երևան՝ M-96, 92, Ստեփանակերտ՝ M-99, 52), աճում է անձի վճռակամության և կյանքի համար պատասխանատվության աստիճանը: Անձը ձգտում է կառուցել իր աշխարհը և իր կյանքը: Այդպիսով, կյանքն առավել առօրենյալ (իսկական) է դառնում: Այս դեպքում արդեն «էքզիստենցիալ տեղ»-ի հետ կապված անվստահությունը, ծանրաբեռնվածության հանդեպ անհանդուրժողականությունը, խոչընդոտների հանդեպ զգայունությունը տեղը գիջում են ներքին մղումների հիման վրա գործունեություն սկսելուն և ալյարտին հասցնելուն:

«Անհատականություն» և «էքզիստենցիալություն» ցուցանիշների գումարի արդյունքում ձևավորվող «ընդհանուր ցուցանիշը» բնութագրում է, թե որքանով է անձի էքզիստենտությունը իմաստով հագեցած: Չափումն ընկած է հետևյալ բևեռների միջև. մի կողմից՝ կյանք, որը սուբյեկտիվորեն ապրվում է որպես չիրացված. մյուս կողմից՝ իրացված էքզիստենտություն: Այս ցուցանիշը վկայում է սեփական անձի և աշխարհի հետ գործ ունենալու ընդունակության, ներքին և արտաքին պահանջներին ու առաջարկներին ընդառաջ գնալու կարողության մասին՝ հարաբերակցելով դրանք սեփական արժեքների հետ [2]: Հետազոտական տվյալների մշակման արդյունքում ստացված ընդհանուր ցուցանիշի դրսևորումը միջին է (Երևան՝ M-195, 78, Ստեփանակերտ՝ M-199, 05), այս դեպքում անձն ընդունակ է գնալու արտաքին աշխարհի պահանջներին և առաջարկներին ընդառաջ, ինքնամոտիվությունը փոխարինվում է երկխոսության մեջ մտնելու հուզական պատրաստվածությամբ: Այս դեպքում գործ ունենք անձի հետ, ով իր կենսածնում փոխվում է զսպվածության և սահմանափակվածության միջակայքում:

Այսպիսով, հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտական խմբերում առկա է չափավոր էքզիստենցիալ հագեցվածություն, ինչը հնարավորություն է տալիս ներկայացնելու, որ իմաստով լեցուն կյանքի ձևավորման ընդունակությունը բարձր չէ: Այսպիսի կենսածնը կարող է հիմնված լինել սեփական պահանջմունքներին և լսողիներին ոչ բավարար չափով ուշադրություն հատկացնելու վրա: Այն կարող է խոչընդոտել աշխարհի հետ արդյունավետ երկխոսության մեջ մտնելուն, միևնույն ժամանակ սեփական էքզիստենցիալ իրացումն ապահովելուն:

Կարելի է ենթադրել, որ ազատության բարձր ցուցանիշ ունենալու դեպքում անձը, կենսագործունեության ընթացքում իրացնելով իր համար կարևոր իմաստը, դրանում առավել մեծ պատասխանատվություն կդրսևորի, ինչն էլ կհանգեցնի էքզիստենցիալ հագեցվածության:

Մեր կատարած հետազոտության տվյալները հնարավորություն են տալիս հետազոտության հաջորդ փուլերում զուգահեռներ անցկացնել անձի էքզիստենցիալ հագեցվածության ցուցանիշի և տեղեկատվական մշակույթի առանձնահատկությունների միջև:

Գրականություն

1. Ջեյնայան Ն.Ա., «Անձնային արժեք» հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն», Երևան, 2017/2, 191 էջ, 151-161 էջեր:
2. Кривцова С.В., Лэнгле А., Оррлер К. Шкала экзистенции (Existenzskala) А. Лэнгле и К. Оррлер. 2009.
3. Лэнгле А. Жизнь, наполненная смыслом. Логотерапия как средство оказания помощи в жизни, 2016, 144 с.
4. Франкл В.Е. Человек в поисках смысла: Пер. с англ. и нем. М., Прогресс, 1990, 368 с.
5. Frankl V.E. Man's search for meaning: The classic tribute to hope from the Holocaust. Rider, UK, 2004, p. 147.



Резюме

Взаимосвязь экзистенции и ценностной системы в контексте психологической войны

Н.А. Зейналян, Академия государственного управления РА

В статье представлена взаимосвязь системы личностных ценностей и экзистенции. В результате анализа исследовательских данных была обнаружена умеренная экзистенциальная насыщенность и сделан вывод, что способность формирования жизни, наполненной смыслом, невысока.

Summary

Interconnection of Existence and Personal Value System in the Context of Psychological Warfare

N.A. Zeynalyan, Public Administration Academy of the RA

The article presents interconnection of personal value system and existence in life. The analysis of research data revealed a moderate existential saturation, which allows us to conclude that the ability to shape life filled with meaning is low.